

Թեմա 6: ՊԱՐՏՔԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաջորդ վարկատեսակը առևտրային կամ բիզնես վարկն է:

Այն տրամադրվում է անհատ ձեռնարկատերերին կամ իրավաբանական անձանց՝ ձեռնարկատիրական գործունեության ստեղծման կամ ընդլայնման նպատակով:

Եկեք դիտարկենք, թե ինչ գործոններ է հաշվի առնում բանկը վարկը հաստատելիս:

Առաջին գործոնը վարկունակությունն է, այսինքն՝ որքանով եք ունակ վարկ ստանալու ու պատշաճ վերադարձնելու: Այստեղ բանկը գնահատում է ձեր բիզնեսի կայունությունը, որի համար ցուցանիշ է բիզնեսի կանխիկի շարժն ու ֆինանսական արդյունքները: Բանկը հանգամանորեն ուսումնասիրում է ձեր կողմից ներկայացված ֆինանսական ցուցանիշները, որի համար շատ հաճախ պահանջում է ներկայացնել բիզնես պլան:

Հիշեցնենք, որ երբ մարում եք վարկը, չպետք է շատ վտանգվի նաև կյանքի որակը: Դրա համար դիտարկվում է, թե ձեր ամսական եկամտի որ մասն էք ուղղելու վարկի մարմանը: Ցանկալի է, որ այն չգերազանցի ամսական եկամտի կեսը:

Երկրորդ գործոնը գրավադրումն ու երաշխիքներն են: Քանի որ, ձեզ վարկ տրամադրելով, բանկը կրում է որոշակի ռիսկ, ուստի այն հակված է ապահովագրել իրեն գրավի ներգրավման միջոցով: Գրավադրման համար հատկապես կարևոր հանգամանք է արագ իրացվելի գրավադրվող առարկայի առկայությունը:

Որոշ բանկեր գրավի փոխարեն կամ գրավի հետ միասին պահանջում են նաև «երաշխավորների» առկայություն: Երաշխավորը նա է, ով իր վրա է վերցնում վարկային պարտավորությունը և պայմանագրով սահմանված կարգով վարկառուի կողմից վարկը չմարելու պարագայում այդ պարտավորությունն իրեն է փոխանցվում:

Դառնալով երաշխավոր, դուք.

- Ակամա դառնում եք վարկառու, այսինքն՝ վարկառուի անվճարունակության դեպքում վարկի մարման պատասխանատվությունը անցնում է ձեզ:
- Դուք կարող եք ունենալ գույքի կորուստ:
- Բացասական ելքի դեպքում՝ վտանգվում է նաև ձեր վարկային պատմությունը:

- Սահմանափակում է ապագայում ձեր սեփական կարիքների համար վարկ ստանալու հնարավորությունը: Եթե դուք պլանավորում եք վերցնել վարկ մոտ ապագայում, սակայն հանդիսանում եք այլ վարկի երաշխավոր, ապա ֆինանսական կառույցը դիտարկում է ձեզ որպես վարկ ունեցող անձ, ինչը կարող է սահմանափակել ձեզ տրվող վարկի մեծությունը կամ, առհասարակ, դառնալ մերժման պատճառ:

Երրորդ գործոնը վարկային պատմությունն է: Ե՛վ ֆիզիկական, և՛ իրավաբանական անձանց դեպքում բանկն ուսումնասիրում է վարկային պատմությունը՝ գնահատելով, թե որքան վստահելի է վարկառուն:

Հիշեք, որ՝

- Վարկային պատմությունը անձի վարկային կենսագրությունն է:
- Վարկային պատմությունը հնարավոր չէ՝
 - ☐ փոփոխել
 - ☐ խմբագրել
 - ☐ ջնջել
- Այն պարունակում է 5 տարվա տեղեկություն:
- Այն կարող էք տարին մեկ անգամ ստանալ անվճար ԱՔՌԱ վարկային բյուրոյից:
-

Բանկերը նաև կիրառում են **սքոր** հասկացությունը:

Սքորը այն գնահատականն է, որը տրվում է ձեզ՝ վիճակագրական ուսումնասիրության և վերլուծության ենթարկելով ձեր վարկային պատմությունը, և ցույց է տալիս, թե որքան լավ վարկառու եք և որքան պարտաճանաչ եք փակել ձեր վարկն անցյալում:

Հայաստանում կիրառվում են սքորերի տարբեր համակարգեր, դրանցից մեկը, օրինակ, **Ֆայկոն** է, որը կիրառվում է աշխարհի ավելի քան 90 երկրներում:

ՖԱՅԿՈ սքորի հաշվարկման մոդելի համաձայն գնահատման բնութագրիչները խմբավորվում են հետևյալ կերպ՝

1. Վճարումների (մարումների) պատմություն – 35%
2. Վարկային բեռի մեծություն – 30%
3. Վարկային պատմության երկարություն – 15%
4. Օգտագործված փոխառությունների տեսակներ – 10%

5. Նոր վարկային դիմում – 10%

Վարկառուի սքոր գնահատականը տատանվում է 300 – 850 միջակայքում: Որքան ավելի բարձր է ձեր սքորն, այնքան ավելի հավանական է, որ բանկը ձեզ վարկ կտրամադրի:

Վարկային պատմությունը պահպանվում է **ԱՔՌԱ վարկային բյուրոյում**: Ֆինանսական կառույցները, ստանալով հաճախորդի թույլտվությունը, հարցում են կատարում վարկային բյուրոյից հաճախորդի վճարային պատմության մասին:

Այժմ վերլուծենք նաև այն հանգամանքերը, որոնց անհրաժեշտ է ուշադրություն դարձնել, երբ դիմում եք վարկի համար:

Գործոններից մեկը վարկի տոկոսադրույքն է: Առանձնացվում են «անվանական» և «փաստացի» տոկոսադրույք հասկացությունները:

Անվանական տոկոսադրույքը Ձեզ տրամադրվող գումարի գինն է, այդ տոկոսով վարկատուն հաշվում է, թե որքան տոկոսագումար եք վճարելու: Սակայն վարկը Ձեզ տրամադրելու համար բանկը կրում է որոշակի ծախսեր, որոնց համար կրկին պահանջվում է վճարում, օրինակ՝ վարկ տրամադրելու և վարկը սպասարկելու միջնորդավճար, գրավի ձևակերպման վճար և այլն:

Արդյունքում, եթե գումարենք ձեր կողմից վճարվող բոլոր գումարները, կստանանք այլ՝ ավելի բարձր տոկոս, որը կանվանենք **փաստացի տոկոսադրույք**:

Վարկի փաստացի տոկոսադրույքի հաշվարկում ներառվում է նաև այն հանգամանքը, թե որքան հաճախ եք կատարում տոկոսագումարների մարումը:

Ի դեպ բանկը, վարկային կազմակերպությունը և գրավատունը պարտավոր են Ձեզ տեղեկացնել, թե որքան է կազմում վարկի փաստացի տոկոսադրույքը, եթե ձեր վարկը՝

- սպառողական վարկ է,
- հիփոթեք է
- կամ մինչև 5 մլն դրամ գյուղատնտեսական, (միկրո) գերփոքր առևտրային կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին տրված վարկ է:

Օրինակի միջոցով հասկանանք անվանական և փաստացի տոկոսադրույքները:

Ենթադրենք, բանկը տրամադրում է 1.500.000 ՀՀ դրամ վարկ 22% տարեկան անվանական տոկոսադրույքով, 24 ամիս մարման ժամկետով: Վարկի մարման ձևը

անուիտետայինն է՝ այսինքն՝ **հավասարաչափ վճարումներով**, որի դեպքում վարկի ամբողջ ժամանակահատվածի ընթացքում յուրաքանչյուր ամիս դուք կատարում եք միևնույն չափի վճարումներ, այն է՝ վարկի գումար գումարած տոկոսավճարներ:

Բանկը նշում է, որ այս վարկի տրամադրման համար անհրաժեշտ է վճարել նաև.

- վարկային հայտի ուսումնասիրության վճար - 10.000 ՀՀ դրամ
- վարկային հայտի սպասարկման վճար - 15.000 ՀՀ դրամ
- գույքի գնահատման միանվագ վճար - 15.000 ՀՀ դրամ

Ստացվում է, որ վակառուն ընդհանուր առմամբ լրացուցիչ ծախսում է նաև 40.000 ՀՀ դրամ:

Արդյունքում, հաշվի առնելով այս ամենը, վերը նշված վարկի տարեկան փաստացի տոկոսադրույքի մեծությունը կկազմի 27,94%:

Բանկային տոկոսադրույքի համար առանձնացվում են նաև «լողացող» և «ֆիքսված» հասկացությունները:

Ֆիքսված տոկոսադրույքի դեպքում վարկի ժամկետի ամբողջ ընթացքում անվանական տոկոսադրույքը չի կարող փոխվել, իսկ լողացողի դեպքում՝ հնարավոր է տոկոսադրույքի փոփոխություն: